

Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
ապրիլի 30-ի N 604 - Ն որոշման

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Ջրային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը երկրի կամ գետավազանի մակարդակով օգտագործելի ջրային ռեսուրսների վրա գումարային ջրօգտագործման ազդեցության չափն է:

2. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը բնութագրում է ջրային ռեսուրսների օգտագործման համապատասխանությունը երկրի ջրային կարիքներին և արտահայտում է ջրօգտագործման ճնշումը ջրային ռեսուրսների վրա: Նշված ցուցանիշը հիմք է հանդիսանում ջրառի վերլուծության և գնահատման համար՝ ըստ ջրօգտագործման ոլորտների:

3. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը որոշվում է ջրավազանային կառավարման պլաններով սահմանված գումարային ջրօգտագործման ծավալի (ջրապահանջարկ) և օգտագործելի ջրային ռեսուրսների ծավալի (ջրառաջարկ) հարաբերությամբ՝ արտահայտած տոկոսով: Ջրավազանային կառավարման պլանի ժամկետի ավարտից հետո՝ մինչև նոր ջրավազանային կառավարման պլանի ընդունումը, հաշվարկի համար հիմք են ընդունվում նախորդ ջրավազանային կառավարման պլանի վերջին տարվա տվյալները:

4. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՋՌԾԱ) երկրի կամ գետավազանի մակարդակով որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՋՌԾԱ} = \frac{\text{ԳՋՕ}}{\text{ՕՋՌ}} * 100$$

որտեղ՝

ԳՋՕ - գումարային ջրօգտագործումն է,

ՕՋՌ - օգտագործելի ջրային ռեսուրս:

5. Գումարային ջրօգտագործումը գետավազանում կամ ջրային մարմնում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից բոլոր ջրօգտագործողների կողմից տարեկան օգտագործված ջրի գումարային քանակությունն է.

$$ԳԶՕ = ՄԳԶՕ + ՍԳԶՕ,$$

որտեղ՝

ՄԳԶՕ - մակերևութային գումարային ջրօգտագործումն է,

ՍԳԶՕ - ստորերկրյա գումարային ջրօգտագործումը:

6. Օգտագործելի ջրային ռեսուրսները մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսների և ստորերկրյա ջրերի օգտագործելի (վերականգնվող) պաշարների գումարային քանակությունն է.

$$ՕԶՌ = ՄՕԶՌ + ՍԶՕՊ,$$

որտեղ՝

ՄՕԶՌ – մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսն է,

ՍԶՕՊ – ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարը:

7. Մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսները (ՄՕԶՌ) որոշվում են մակերևութային ջրային ռեսուրսների և էկոլոգիական թողքի տարբերությամբ.

$$ՄՕԶՌ = ՄԶՌ - ԷԹ,$$

որտեղ՝

ՄԶՌ - մակերևութային ջրային ռեսուրսն է,

ԷԹ - էկոլոգիական թողքը:

8. Ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարները (ՍԶՕՊ) որոշվում են ստորերկրյա ջրային ռեսուրսների, ստորերկրյա ազգային պաշարների և ստորերկրյա ռազմավարական պաշարների տարբերությամբ.

$$ՍԶՕՊ = ՍԶՌ - ՍԱՊ - ՍՌՊ,$$

որտեղ՝

ՍԶՌ - ստորերկրյա ջրային ռեսուրսն է,

ՍԱՊ - ստորերկրյա ազգային պաշարն է,

ՍՌՊ - ստորերկրյա ռազմավարական պաշարը:

9. Ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարները գետավազաններում ստորերկրյա ջրավազանների հաստատված օգտագործելի պաշարներն են:

10. Մակերևութային ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՄՋՌԾԱ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՄՋՌԾԱ} = \frac{\text{ՄԳՋՕ}}{\text{ՄՕՋՌ}} * 100$$

11. Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՍՋՌԾԱ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՍՋՌԾԱ} = \frac{\text{ՄԳՋՕ}}{\text{ՍՋՕՊ}} * 100$$

12. Բանաձևերի բոլոր պարամետրերի չափողականությունն արտահայտվում է մլն մ³-ով:

13. Զրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման արժեքները դասակարգվում են 4 դասի՝

- 1) **չծանրաբեռնված փոքր 25%-ից** (ջրօգտագործումն անվտանգ է, իսկ ճնշումը՝ նվազագույն).
- 2) **ցածր ծանրաբեռնված 25% - 65%** (ջրօգտագործումն արդյունավետ է և կայուն, իսկ ճնշումը՝ կառավարելի).
- 3) **միջին ծանրաբեռնված 65% - 100%** (ջրօգտագործումը դիսկային է, ճնշումը՝ մոտենում է թույլատրելի առավելագույն շեմին).
- 4) **ծանրաբեռնված մեծ 100%-ից** (տեղի է ունենում ջրային ռեսուրսի գերշահագործում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ